## 165. ՀԼԻՎՈՒՐԸ ՕԾԱՓՆԵՐԵՆ ՄԸԵԾ ԱԽՊԵՐՆ Ա ՏԵՌՆՈՒՄ

*Մին պառավ կնեգյ ծիրան հըլևներեն տուն ա քցում, ասում ա.— Քյնի, ես կարել չըմ քեզ եշիմ, քյնի կլըխդ պահե։*

*Էդ մարթը մին ծու ա յոր օնում տնում ծոցումը, քյնում։ Ճանապարհեն մին մաղի քյանդիր ա քթնում, մին էլ մին կորա տեսնում, յոր օնում տնում ծոցումը, քյնում։ Վեր մթնում ա, մին տոն ա մտնում, վեր քշերը տեղ ապրի, էս տանը ուշափներ էլ են ինում, էս ուշափներան մինը ասում ա.*

*—Եկեքյ մին քար յոր օնինքյ, հըռնեբումըս հոփ տանք, հուր հոփ տված քարան ճուրը ծլլաց, նա տառնա մեր մեծ ախպերը։*

*Հու վեր քարը հոփ ա տամ, քարը հափռեն մաշին այլեր ա տեռնում, յա էլ փշոր-փշոր ա տեռնում, ամմա ճուր կաթում չի։ Էտ հլևուրը, վեր ծուն հափռեն մաշին հոփ ա տամ, ճուրը ծլլամ ա։ Ուշփներեն ռեխը պեց ա մնում։ Ասում ըն.—Սա մեր մեծ ախպերն ա։*

*Ասում ըն դե վեր տի յա, լոխճին կուռնուտական մին մաղ պուք տանք, տեսնանք հուրն ա մեծ։*

*Ուշուփնեն իրանց կռնտական մին մաղ ըն պուք տամ, վեր ամեն մինավը մին մարթ կախ ինի, կտրել չի. քցում ըն կրակը էրում, էս հլվերեն էլ ըն ասում.—Մըե՛ծ ախպեր, դե քեզ տեսնանք։*

Մըեծ ախպերը կռնտական մաղի քյանդիրը վեր տո̈ւս ա օնում, էլ զըրմանալու տեղ չի մնում. տա էլ ըն քցո̈ւմ կրակեն մաչը, տեսնում ըն, վեր օժավ ա։ Ասում ըն.—Մհենգյ ամեգյըս մին վիչիլ հանինքյ, տեսնանք հո̈ւրն ա մեծ։ Օչափնեն հանում ըն, ասում.—Մեծ ախպեր, մհենգյ տու հանե։

Մեծ ախպերը կորեն վեր հանում ա, սահանք լհա, ըրմանքան փա դըն տեռնում. էլ ճար չկա, դո̈ւզ, վեր հլիվերեն տնո̈ւմ ըն ո̈նրանց մեծ ախպոր տեղ։

Ռավոտ քչերավ սահանք քյնո̈ւմ ըն քոլ, փադ հվաքին պիրին։

Մեծ ախպերն ասում ա.—Թաքա ամեն օր եկած փադի, քյանդիրը պիրինքյ ծմակը, շիլակինքյ տանինքյ։

Օչափնեն ասում ըն.—Չէ՛ մըեծ ախպեր, քու փադը հրկավեր չի։

Սահանք ամենքը մին շիլակ փադ ըն անում, շիլակում, մըեծ ախպորն էլ ասում.—Դե տու եր իլ կլխեն նստե։

Օչափն ասում ա.—Մեծ ախպեր, էս հինչ թի՞թավ ըս։

Ասում ա.—Ախր, օժըս յրա̈ն չըմ քցո̈ւմ։

Ասում ա.—Հլա մին յրա̈ն քցի օժտ, տեսնամ։

Էս մեծ ախպոր ջըռումը մին բիզ ա ինո̈ւմ, տո̈ւս ա օնում խըղըտակեն բիզավ հոփ տամ, օչափն ասում ա.—Պա՛, պա՛, պա՛, պա՛, չէ՛, մեծ ախպեր, օժըտ եր կալ։

Ուշուփնեն մտածում ըն, թա հունց ա՞նին, վեր ըստանա ըզադվին։ Պիրում ըն ահագին փող տամ, թա.—Մեծ ախպեր, տու քյնի քեզ հետե հունց օզում ըս, ինդի ապրե։

Հլեուրը փողը յոր ա օնում, կյամ պռավեն կոշտը, նրա հետ ապրում։